

ՊԱՐՈՒՅՅՐ ՄՈՒՐԱԳՅԱՆ, ԿԱՐԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՑ ՊԱՏԱՌԻԿԸ

Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ն ունեցել է վեց հրատարակություն (1793, 1873, 1891, 1904, 1907, 1933 թվականներին), ընդ որում 1873 թվականի տպագրությունը կատարվել է Դ. Ալիշանի, իսկ 1904-ը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի ձեռքով¹: Դ. Ալիշանը անհրաժեշտ է նկատել զգուշացնել, որ «և ոչ միոյ յետ այնորիկ (իմաց 1793 թ. հրատարակությունից) հանդիպեալ մեր նորոյ օրինակի Պատմութեանս, հարկաւորիմք ըստ առաջնոյն կրկնել զտպագիրս զայս... սակաւ ուրեք ի յայտնի վրիպակսն՝ արարեալ ուղղութիւն և յերիս տրոհեալ Դրուագս զբովանդակ դիրսն...»: Եվ իրոք, հմուտ բանասերը նկատել և ուզդել է տասնյակ վրիպում-աղավաղումներ, իսկ Պատմության «Տեսիլն ո. Սահակայ» և նրա մեկնության հատվածը խըմբագրել-կազմել է «ըստ հնագոյն օրինակաց, որ ի ճառընտիրս գտանին»: Այս տպագրությունը 1891 թ. վերահրատարակվեց առանց խոշոր փոփոխությունների «Քանդի յետ նախընթաց (իմաց 1873 թ.) տպագրութեան մատենիս ոչ յայտնեցաւ մեկ նոր ձեռագիր, ոչ ինչ և նոր ոմիմք աւանդեալ...»: Միակ նորույթը այն էր, որ «արարաք տեղափոխութիւն զիխոց կամ հատուածոց ինչ ի սկզբան Պատմութեանն, որ յէջս 7—14 երկրորդ տպագրին»: Այսպիսով, հիշյալ երեք տպագրությունները հենված են մեկ ձեռագրի վրա, հրատարակիչների ներմուծած սրբագրությունների հավելումով:

Նախորդների համեմատությամբ խոշոր առաջընթաց կատարվեց շորրորդ տպագրությամբ: Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը մինչև այդ հանգամանորեն ուսումնասիրել է Փարպեցու Պատմության ձեռագրերն ու նրանց հարաբերակցությունը միմյանց և անդրանիկ տպագրին², պարզել նրանց մայր օրինակը: Պակաս նախնական աշխատանք չէր կատարել և հրատարակության երկրորդ աշխատասիրողը՝ Ստ. Մալխասյանցը, նա մինչ տպագրության երես հալը հրապարակել էր մի շարք արժեքավոր սրբագրություններ: Անվանի հա-

1. Ղազարայ Փարպեցոյ արարեալ Պատմութիւն, տպագրեալ յամի տեսուն 1793, ի մեջնորդիկ:

2. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, վենետիկ, 1873 [ի ձեռն Դ. Ալիշանի]:

գ. Նույնը, վենետիկ, 1891:

դ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյանց, Տիղիս, 1904:

ե. Նույնը, Թիֆիս, 1907:

դ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, վենետիկ, 1933 [ի ձեռն Հ. Գրիգոր Մարգարյանի]:

2 Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1904, էջ 542—549, հմմտ. Նույնի՝ Խորենացու Պատմության ուսումնասիրություն, «Արարատ», 1891, էջ 147—155:

յագետների տպագրությունը հենված էր, հիմնականում, էջմիածնի մատենադարանի երկու ձեռագրի վրա՝ № 611 և № 1688, որոնք այժմ գտնվում են Երեվանի Մատենադարանում և կրում են 2639 և 1891 թվահամարները³: Հրատարակիչները նկատի են առել նաև Ղ. Ալիշանի որոշ սրբագրումները, երբ ճիշտ չեն համարել իրենց երկու ձեռագրի տված ընթերցումը՝ մանավանդ Սահակի տեսիլի բաժնում: Գ. Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությամբ և 1904 թ. հիշյալ տպագրությամբ հայագիտության մեջ պարզվեց էական մի հարց. Փարագու Պատմության անդրանիկ տպագրության հիմք-ձեռագիրը ընդօրինակված է էջմիածնի № 1688-ից (այժմ՝ № 1891), իսկ վերջինս էլ՝ նույն Մատենադարանի № 611-ից (այժմ՝ № 2639), որոշ հավելումներով ու լուսանցագիր սրբագրություններով: Ուրեմն, Փարագու Պատմության թվարկած բոլոր հրատարակությունների հիմքում ընկած է մեկ մայր օրինակ՝ իր երկու ընդօրինակությամբ (վենետիկի անդրանիկ տպագրության ձեռագիր և Մատենադարանի այժմյան № 1891), իսկ այդ մայր օրինակը (№ 2639) գրված է 1672 թվականին (ճիշտը՝ մի քանի տարի անց), Բաղեշում Գրիգոր Երեցի ձեռքով (ստացող՝ Վարդան Եպս. Բաղիշեցի): 1904 թ. հրատարակության գրախոսության առիթով բանասեր Բ. Սարգսյանը կրկին անդրադավ առկա ձեռագրերի փոխառնչությանը⁴: Նրա հոդվածից պարզ դարձավ, որ վենետիկում կա Փարագու Պատմության երեք ձեռագիր (№ 1206, 1088, 129), ընդօրինակված 1781 (№ 1088), 1782 (№ 1206) և 1784 (№ 129) թվականներին: Գրշագրերից երկուսը (№№ 1088 և 1206) գրված է Գևորգ Պալատեցի Տեր-Հովհաննիսյանի ձեռքով, իսկ երրորդը (№ 129) ընդօրինակված է հիշյալ № 1206-ից: Ընդ որում, ըստ Բ. Սարգսյանի ատպացույցների, վերջինս էլ հենց հիմք է դարձել վենետիկյան անդրանիկ տպագրության, վենետիկի № 1088 ձեռագիրը ընդօրինակված է էջմիածնում (1781 թ.), մինչ № 1206-ի ընդօրինակման տեղն ու մայր օրինակն անհայտ է, իսկ Բ. Սարգսյանի եզրակացությամբ այն կամ № 1088-ից է արտագրված, կամ «լաւ ևս՝ երկուքն ալ իրարմէ տարրեր գրշագրերէ ընդօրինակուած են»⁵: Այսպիսով, իրականությունն այն է, որ Փարագու Պատմության հնագույն օրինակը, գուցե և առ այսօր եղածների մայր օրինակը, 1672 թվականին ընդօրինակվածն է (Մատենադարան № 2639), որի հիմքում ընկած է եղել մի «հին աւրինակ», նորոգվելուց հետո էլ՝ պակասավոր⁶:

1904 թ. հրատարակության աշխատասիրողները իրենց կազմած ընագիրը վերջնական չեն համարել և գրել են. «Ընթերցողին մնում է հավատալ մեր հավատիացմանը, մինչև որ լույս տեսնի Փարագու մի նոր հնադատական հրատարակություն...»⁷: Հիրավի, Բ. Սարգսյանի և Ն. Բյուզանդացու գրախոսություն-քննությունները ցույց տվին, որ այդ հրատարակությունը կամա թե ակամա՝ սխալաշատ է, Բյուզանդացու խոսքով «կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ, միտ դնելով մատենա-

³ Նոր հրատարակությանը նշանակալի նպաստ բերեց և Ն. Բյուզանդացու քննությունը (տե՛ս նրա՝ Ղազար Փարագու Պատմութեան հայոց Յառաջարան, փորձ կարգադրման լիտերատ հատուածոցն և ցուցումն տեղեաց, յորս թուղթ անկեալ է ի սկզբնագիր օրինակէն, «Էռմա», 1896, զիրը Բ., էջ 309—328):

⁴ Բ. Սարգիսյան, Երկու խօսք Ղ. Փարագու նոր տպագրութեան առթիւ, «Բազմավէս», 1905, էջ 52—62, 129—133:

⁵ Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 58:

⁶ Հիշյալակարանը տե՛ս 1904 թ. հրատ. Առաջարանում, էջ 6:

⁷ Նույն տեղում, էջ է:

գրին լեզուին յատկութեանց և պատմութեան ընթացքին»⁸: Բայց միաժամանակ նկատելու է, որ «միտ գնելով» անհնար էր հարթել Առաջարանի ու Ա. գրքի բացորոշ հունական աշխատանքը, ակներև ընդհատումները և այլն: Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի հրատարակությունը կոչված էր խթանելու ապագա բնագրագիտական աշխատանքը: Եվ իրոք, 30-ական թվականներին այդ դժվարին գործն ստանձնեց հայագետ Գրիգոր Սարգսյանը: Սկզբնապես նա անհրաժեշտ համարեց «ազգիս գիտնոց» ժանոթացնել իր նախընտրած սկզբունքներին, իբրև նմուշ հրապարակելով Փարավեցու պատմության Յառաջարանը⁹: Նրա ժանուցմամբ «մօտալուս հրատարակութիւն» ամենուն կատարելութիւնները (խոսքը բանասերների ճշգրտումներին է վերաբերում) սկսուի ամփոփէ իր մէջ, շանալով միշտ, կարելի եղածին շախ՝ ձեռագրաց հեղինակութիւնը վեր պահել, յարգելով միանգամայն՝ ուր հարկը կը պահանջէ, քաջարիր բանասիրաց սրամիտ տեսութիւնները»¹⁰: Դատելով Յառաջարանի բնագրից, գիտնականը իսկապես ծանր ու մանրախույզ աշխատանք է կատարել: 1933 թ. լույս տեսավ Փարավեցու Պատմության (ու թղթի) նրա կազմած բնագրիր, սակայն առանց տարբնթերցումների ու ծանոթագրությունների, բանի որ «ի մհծադիր անդ տպագրին, ընդ հուպ՝ լրնթացս տարւոյս երեխւոյ, կարդեսցուք մանր զամենայն ի վայելս բանասիրաց և յարանուն փառս Հայրենեաց»¹¹: Յավոք, սպասելի այդ հրատարակության որևէ օրինակ մեղ ժանոթ չէ:

Այս է, համառոտակի, Փարավեցու Պատմության ձեռագրերի ու հրատարակությունների վիճակն առ այսօր¹²: Դժվար է պատկերացնել՝ Վ դարի երկը մինչև 1672 թ. ձեռագրին հասնելը բանի տասնյակ ընդօրինակություններ է ունեցել և ինչպիսի այլափոխություններով, աղավաղումներով ու «խմբագրում-սրբագրություններով» հասել մեզ: Ընդօրինակությունների միջոցին առաջացած ակամա վրիպումներն իսկ բավական էին, որպեսզի այսօրվա բանասիրությունը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգությունն ունենար: Մինչդեռ նույնիսկ էջակորուստներ կան: Այսօր, երբ հիմնականում հավաքված և գերակշիռ մասով նկարագրված են մեր գրշագիր մատյանները, Փարավեցու Պատմության XVII դարից հին և ամբողջական ձեռագիր հայտնաբերելու հույս գրեթե շկա: Ռւստի մնում է մեկ ելք. ձեռագրական հավաքածուներում երեան բերել Պատմությունից քաղված հատվածներ (ցանկացի է՝ XVII դարին նախորդող շրջանից), պրալտել երբեմնի ամբողջական ձեռագրերից պոկված-պահպանված հատակոտորներ (պահպանակ կամ պատառիկ) և, դրանք միմյանց ու առկա ձեռագրերին համեմատելով, բանասիրական քննության զուգորդմամբ քննել-վերականգնել բնագրի աղավաղված տեղիները: Փորձը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ թափված շանքերը ապարդյուն շնումնա: Հայագետ Նորայր եպս. Պողարյանը «Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419 թվականին ընդօրինակված № 1 հսկայակերտ ձառ-

⁸ Ն. Բյուզանդացի, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարյան Փարավեցու, «Յուշարձան», 1911, էջ 173:

⁹ Գրիգոր Սարգսյան, Փարավեցու Յառաջարանը յղկուած, «Բաղմավէպ», 1932, էջ 444—459:

¹⁰ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 444:

¹¹ Ղազարյան Փարավեցու Պատմութիւն Հայոց..., վենետիկ 1939, էջ Բ:

¹² 1907 թվականի «Ղուկասյան մատենաշարով» եղած հրատարակությանը շանդրադարձանք, որովհետեւ այն վերատպությունն է 1904-ի առանց ներածական մասի ու տարբնթերցվածքների:

ընտրի» երկրորդ հատորում (էջ 720ր—728ր) հանդիպեց Փարակեցու Պատմության մի ծավալուն հատվածի, որը «գրի առնված է Փարակեցիի ծանոթ առաջին ձեռագրեն երկու և կես դար առաջ»¹³: Հատվածի և 1904 թ. հրատարակության համապատասխան մասի (էջ 12—28) համագրությունը արդարեւ նշանակալի նպաստ է բներում Պատմության բնագրագիտական ուսումնասիրությանը, թեև նրանում «ճառընտիրներու գրիշներուն հատուկ սովորության համաձայն կատարված են նաև զեղչումներ նշանակալի քանակությամբ»¹⁴: Մեր Մատենադարանի «Յուցակ ձեռագրացով» հայտնի դարձավ, որ այդ հավաքածոյի № 4803 գրչագրում հատված կա «ի Պատմութենէն Հայոց Ղազարու Փարակեցոյ»¹⁵, գրչագած XVII դարում: Այս ուշագրավ տեղեկանքը առիթ դարձավ, որպեսզի մենք գրադվենք այդ ձեռագրի և մասնավորապես Փարակեցու Պատմությունից քաղցրած հատվածի ուսումնասիրությամբ: Փարզվեց, որ ձեռագրում եղածը (էջ 78ա—85ա) համապատասխանում է հիշյալ 1904 թ. տպագրության 18₂₁—38₂₆ էջերին, որ մասամբ ընդգրկված է և ն. Պողարյանի հրապարակած քաղցրածում (էջ 18—28): Պակաս կարենոր չէ դիտել, որ № 4803 ճառընտիրը ընդօրինակված է մատենագրության մեջ քաջ հայտնի Գրիգոր Սերենց Խլաթեցու ձեռքով (ապրիլ է 1349—1425 թվականներին)¹⁶, ուստի այն կատարելապես ժամանակակից է երուսաղեմի վկայակոչված ճառընտիրին, թերևս մեկ-երկու տասնամյակով էլ հին:

Այսպիսով, Փարակեցու Պատմության հատվածներ կան XIV—XV դարերի ձեռագրերում, որոնք երկու-երեք դարով կանխում են մեզ հայտնի ամբողջական զրչագրի ժամանակը (1672 թ.): Պակաս արդյունավոր չէ նաև այս երկի հնագույն երկաթագիր պատառիկներ պրապտելը: Բ. Սարգսյանը գեռ 1905 թ., հիշված գրախոսության առիթով, արձանագրել էր. «...Մեր ձեռագրատան մէջ կը գտնուին Ղազարայ Պատմութեան մագաղաթեայ երկաթագիր օրինակի մը պատառիկներ»¹⁷, որոնք, բանասերի կարծիքով, «մեծագիր, երկայուն և պատկառելի ձեռագրի մը» մեկ թերթն են կազմում, որ հետագայում կտրատել և «14 վոքրիկ էջերու» են վերածել՝ «Շնորհալոյ (Յիսուս Որդիի) փոքրագիր օրինակի (ԺԲ) պահարաններ (=պահպանակներ) ձեացնելու համար»: Բ. Սարգսյանը պատառիկի ընթեռնելի տողերը համեմատել է 1904 թ. հրատարակության «48—54 երեսներու ինչ-ինչ հատուածոց հետ», հանդիպել նախընտրելի տարրերությունների և եղրակացրել, թե «այս ձեռագիրս ծանօթ եղածներէն շատ տարրեր և ինքնուրոյն խումբ մը կը կազմէր»¹⁸: Այդ խմբի բնույթն ու կշիռը պարզելու համար անհրաժեշտ է երեսն բերել «երկաթագրիս ցիր ու ցան կշիռը կազմելու համար անհրաժեշտ է երեսն բերել»:

13 Խորայր Եպս. Պաղարյան. Նորագյուտ հատված Ղազար Փարակեցու «Հայոց պատմութեան», «Բաներ Մատենագարանի», № 8 (1967), էջ 263—274:

14 Անդ:

15 Յուցակ ձեռագրաց. Ա. էջ 1290:

16 Սերենցի խոկազիր լինելու պարագան մեզ հավասար հայագետ Ա. Մաթևոսյանը, մատնացույց անելով զրչի հետեւալ հիշատակարանը, «Սուրբ երրորդութիւն, անմահ աղաւիթիք սրբոց քոց քահանայից ողորմեա՛ ստացաւզի գրոցս պարոն Հնդուին և իւր ծնողացն՝ Յովանիսին և Աղութին և ամենամն արեան մերձաւորաց իւրեանց, ևս առաւել՝ ամենամենդ գծագրաւզի Գրիգորի և ծնաւղաց իւրոց Սերին և Խոյանդին և ամենայն ասպականաց և ընթերցողացս և լսօղացս, ամէն» (Ճեռ. № 4803, էջ 192 Վր):

17 Բ. Սարգսյան, եղջ. աշխ., էջ 61:

18 Նույն տեղում, էջ 62: Ափսոսանքով պիտի նշել, որ երախտավոր հայագետը հրապարակել է, միայն ընթեռնելի տողերի տարբերեցումները (էջ 61—62), մինչդեռ պատառիկի, ժա-

և այս մասերն եւս։ Այժմ պարզվում է, որ Փարագեցու Պատմության ցիրուցան եղած այլ պատառիկներ իրոք կան, որոնց ուսումնասիրությունը մեզ հուշում է պատմական այդ արժեքավոր երկի շատ ավելի հին, շատ ավելի նախնական ու անաղարտ բնագիր։ Կրկնում ենք, միայն այս ճանապարհով կարող ենք սկզբունքներ, ելակետեր ու կովաններ մշակել սպասելիք քննական հրատարակության համար, եթե չենք ուզում սրբագործել միջնադարյան դրիշ-խմբագիրների կամա-ակամա միջամտությունները, դարերով կուտակված սխալանք-վրիսկակները։ «Հին բնագրաց քննական հրատարակութիւնն կը պահնջուին», — գրել է Ն. Բյուզանդացին¹⁹։

ՍՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի հայկական հավաքածոյի Ա—82 ձեռագիրը մուտք է գործել 1916 թվականին՝ վանի հավաքածոյի կազմում²⁰։ Սկզբնապես քարտագրվել է իրեն Շարակնոց, մինչդեռ իրականում Մանրուսմունք է։ Սկսվում է՝ երգ տեառն Ներսիսի ասցեալ՝ գիշերային պաշտամանց. Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, տէր... (թ. 1ա)²¹։ Զեռագիրն այժմ ունի 139 թերթ, բաղկացած է 12 պրակից, յուրաքանչյուրը 12 թերթ (7-րդ պրակն ունի 8 թերթ)։ Զեռագրի առաջին թերթը կտրված է։ Մեծություն՝ $12,5 \times 10$ սմ, զրություն՝ միասյուն, տողեր՝ 18—20, տողերը, ինչպես և աջ ու ձախ լուսանցները նշված են բարակ գծերով, նյութը՝ լավ որակի բարակ մագաղաթ, հազվադեպ նորոգումները՝ թղթով, գրշություն՝ բոլորդիր խազերով։ Ունի ճոխ կիսախորաններ, լուսանցագարդեր, զարդագրեր և գլխատառեր։ Շաղկողը հաճախ է օգտվում ուկուց։ Կազմը՝ խնամքով պատրաստված, դրոշմազարդ, կտշեպատ տախտակ։ Պահպանվել է գրշի երկու հիշատակարան։

ա. Զստացաւղ տեառն եղանակացս զսուրք բարունապետն Եսայի և ըզգրիշմ՝ զՊալոս աղաշեմ յիշել ի տէր (էջ 16ա).

բ. Զստացաւղ եղանակիս զսուրք և զերանաշնորհ բարունապետն Եսայի յիշեսցիք ի տէր (էջ 89ա)²².

Գրշության ժամանակ կարելի է համարել XIV դարը, ելակետ ունենալով մագաղաթի պատրաստման որակը, բոլորդիր ինքնատիպությունները, մանավանդ զարդագրերն ու լուսանցագարդերը։ Այդ է հուշում և ձեռագրի ուղղամասելի, զրշության, վիճակի և այլնի հետ կապված հարցերը մնում են անհայտ՝ գեթ նմանաւությունը հրապարակած շինելու պատճառով։

19 Ն. Բյուզանդացի, Քննութիւն Մալխասնաց հրատարակութեանց..., էջ 161։

20 Զեռագրում կա ներդիր այսպիսի մի հասցե։ «Օտ Կավազսկոց օդու Իմպ. Մոսկ Արք. Օնցեստա»։ Ինչպես երեսում է, որոշ ժամանակ այդ ընկերության սեփականությունն է եղել։

21 Նույն խմբագրության Մանրուսմունքի նկարագրություն տե՛ս Հ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 499—500 (ձեռ. № 183)։

22 Կան ետին շրջանի հիշատակագրություններ։

ա. «Զվերջին ստացող սուրք զրոցս զԱռոմս Աղութեանց և զծնաւզնի իմ զկարապետ և զթուխութանկ և զեղբայրք իմ և զամենայն արեան մերձաւորքն իմ յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զմեղ յիշէ, ամէն» (էջ 139ր)։

բ. «Ով լինզը պիրուն,

Տետրակս ի ձեռդ հաստատուն։

Դու զարանաս ի սուրք հոգույն

Եւ հասանես յաւարտ բարոյն» (էջ 139 թ)։

գ. «Յիշեցէք ի տէր զՄկրտիլը Թուրաւադէն և աստուած ողորմի ասացէք, աստուած ձեզ ողորմեսցէ, ամէն» (էջ 139Վ)։

գրությունը: Ամենայն հավանականությամբ հիշատակարանի «սուրբ և երանաշնորհ» բարունապետ Եսային» նշանավոր Եսայի նշեցին է, քանի որ այդ շրջանում նման մեծարանքի արժանի մեկ ուրիշ Եսայի շղիտենք: Եթե այդ հիշտ է, ապա ձեռագիրը գրված պետք է լինի մինչև 1338 թվականը (մինչև նշեցու մահը), Գլածորում, նրա բարունապետության օրոք (1284—1338 թթ.): Զեռապիրի ինամյալ ու զարդարուն լինելը միանգամայն վայել է ստացողի անվանն ու գրչության դպրոցի Հեղինակությանը: Եվ իրոք, Գլածորից հայտնի նշանավոր գրիչներից մեկը եղել է Շողոս Կիլիկեցի կամ Ակներցի վարդապետը, Գ. Հովսեփյանի որակմամբ՝ «Ծնորհալի գրիչ և մանրանկարիչ»²³, որը «յաղաղ փափագման իմաստասիրական արհեստից տարաշխարհիկ եղեալ ի կայս և ի կոյս արևու»²⁴, բնակություն է հաստատում Գլածորում: Հիշյալ փաստը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և լրացուցիչ ուսումնասիրություն պահանջում ինչպես գրչագրի բովանդակության, նրա կիրառության, այնպես էլ մանրանկարչության ու գրչության արվեստի առումով²⁵: Ահա այս ձեռագրում իրքի պահպանակ է գործածված Ղազար Փարպեցու Պատմությունից պոկված կամ պահպանված մեկ թերթ, որը միջին մասից կիսված է և երկու պահպանակ-պատառիկի վերածված, որոնցից յուրաքանչյուրը երկծալ կարմել է ձեռագրին՝ կազմելու ժամանակ: Սկզբի պահպանակի շափերն են $19,3 \times 12,1$ սմ, վերևի աջ անկյունը երեք տողի սահմանում պոկված է, վերջինը՝ $15,8 \times 12,1$ սմ: Ուրեմն, թերթի սկզբնական շափը եղել է ավելի քան $24,2 \times 19,3$ սմ: Գրությունը երկույուն է, մազաղաթը՝ հաստ ու լավորակ, ժամանակի ընթացքում դեղնած: Տողերը նշված են ճնշումով, էջում՝ 21 տող: Գրված է սև թանաքով, տեղ-տեղ այժմ ներկաթափ է ու խունացած: Որոշ տառանիշերու ուշ շրջանում այլ թանաքով թարմացված են, որը սակայն շի խանդարում հնի տարրորշմանը: Գրչությունը ուղղաղից երկաթագիր է, միայն որոշ տառաձեր մասամբ բոլորգծային են: Ժամանակ՝ X—XI դար:


Ստորև տալիս ենք պատառիկի վերծանությունը, թերթերի հաջորդականությունը նշելով Հոռմեական թվանշանով, միաժամանակ այն համեմատության մեջ դնելով Փարպեցու Պատմության գիտական հրատարակության հետ (վերջինս իրքի ընդուղյա տարրն թերցում):²⁶

23 Գարեգին կարսդիկոս Հովսեփյան, Խաղբակեանը կամ Պոռշեանը Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 177:

24 Լ. Խաչիկյան, ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 99—100, ևմ. Լ. Խաչիրյան, Մատենագրական տեղեկությունները Գլածորի համալսարանի մասին, ՊԲՀ, 1965, № 4, էջ 200:

25 Անհրաժեշտ է համադրել Պողոսի ընդօրինակությամբ հասած մյուս ձեռագրերի, ինչպես և նրանցում եղած մանրանկարների հետ:


26 Տողատակի սովորական փակագծում, գիտական բնագրի համեմատվող ձեռագրերի ցուցանիշների պահպանումով, անհրաժեշտ ենք համարել վկայակոչել այն ընթերցումները, որոնք մերձ են մեր պատառիկին, բայց հրատարակիչների կողմից նախընտրված չեն:



80 27-32


II 1p / / / / 196036 01-1
 Տել ՅԱՆԵՆԱՅՀ² եկ ԱՊԱԿԱ-
 ՆԵԼ ՈՉ ՊԱՏԻԱԽՈՒՅՅ: ԱՐԴ, ՅԱ-
 ՄԵՆԱՅՆ ՆԻՒԹՍ ՀՈՒՐ, Ա-
 5 ՊԱ ՈՒՐԵՄՆ ԱՄԵՆԱՅՆ ՆԵՒ-
 ԹՔ ՅԵՐԿՐԻ ԱՍՏՈՒՄՔ: Ա-
 ՊԱ ԹԵՇ ԱՅԴՊԵՍ ԳԻՏԷՔ, ՈՐ-
 ՊԵՍ եկ ԷԴ ԻՍԿ եկ ՏԵՍԱՆՔ,
 ԸՆԴԵՐ ԿՈՒՐԱՑԵԱԼ ՄՏԱՒՔ
 10 ԴՐԱԿ ՄԱՍՆ ՅԱՍՈՒԱԾՈ-
 ՅՆ ՊԱՏՈՒԵԱԼ Ի ՇՔԵՂՈՒ-
 ԹԻԵԱՆ ԳՈՐԾ ՄԱՏՈՒՑԱՆՔ³,

¹ ուստեղ 2 և անխնայ 3 եւ ապականել ոչ պատկառէ լ (2 ոչ պատկառէ) 4 արդ լ ոչ պակառէ
² երկրի (2 յերկրի) 6 թէ 7 որովէս եւ էղ իսկ եւ տեսանէր լ 8 յաստուծոցն պատուեալ ի շքեղու-



1 2ր	[ԶԿԵՄՆ՝] ՆԱԽԵԱԱԼ ԹՇՆԱՄԱ- [ՆԵՔ]: ՈՐՊՈՒՄ ՅԱՂԻՖՍՈՅ
15	[ԵԽ Ի] 'Ք'ԱՐԱՆՑ Ի ԿԻՄՈՒՑՆ՞ Ա- ՊԱՐԱՆՑ ԵԽ ՍԵՆՆԱԿԱՍ ԹԱ- ԳԱԼՈՐԱՑ ԵԽ ԻՇԽԱՆԱՑ ՇԻ- ՆԵՔ ¹⁰ , ԵԽ Ի ԿԻՄՈՑՆ՞ ՈՐՄ Ա- ՆԱՏԱՆՑ ԵԽ ԴԱՇՏԱՆԱՏԱ- 20
20	[Ն]Ց ԿԱՐԳԵԱԼՔ ՅԱԽՐԻԵՒՆ ¹² [/ / / / / / / / /]


թեան գործ մտուցանէք] անուանէք ասսուածք 9 ի կիսոցն] զկէսս 10 ապարանս եւ սննեակը թագաւորաց եւ իշխանաց շինէք] ապարանս շինէք 11 ի կիսոցն] զկէսս 12 որմ սնատանց եւ բայցտանատանց կարգեալք լուրինին] տունս դաշտանաց և ազտեղութեան շինէք:



ՏՅ33—37


- | | |
|------|---|
| 1 2ս | ՀՀԱՆԴԵՐՉՍ ՄԵԾԱԳԻ [Ա.3-]
ՇԱ.Ո.Ս ՅԱՒՐԻՆԷՔ, [ԸՆԴ Ե-]
ՄԻՆ ԽԱՆԴԱՄԱՆՍ [ԵՒ]
ԽԸԼՆԱՆՈՑՍ ԱՐԱՐԵ[Ա.Լ ԿՈ.Զ-] |
| 5 | ՄԵՔ, ՀԲՈՎ ԱԱՏՈ[ԻԱԾՈՑՆ]՝
ԶՈԶԽՈ.ՐՈ ԵՒ ԶՈ.ՐՉԱ[Ո.Ս Ա-]
ՆՈՒԱՆԵԱԼՍ, Ի ԶԵՆՉ [ՊԱ-]
ՏՈՒԱԾՍ ² , ԽՈՐՈՎէ[Ք ԵՒ Ե-]
ՓԵՔ, Ի ԶՐՈՅ ³ ԿԵՍ[ՈՅՆ] ⁴ |
| 10 | ԶԴԱԾՏԱՆՍ ԵՒ ԶԹՈ[ՐԱԽՈ]
ՎԻՐԱ.ԻՈՐԱՅ ԵՒ Զ[ԱՂԲՍ, Զ-]
ԱՐԵՒՆ ՈԶԽԱ.ՐԱՅ Ա[ՈԱՆ-] ⁵ |

¹ Հանդերձս մեծապայծառս յարինէք, ընդ նմին՝ խաւղամանս և խըլնանցս արարեալ կազմէք] ² զոշխարս եւ զարշառս անուանեալս, ի ձենչ պատուածս] զարշառս և զոշխարս Յ ի շրոց] ³ և շրով] ⁴ կիսով] ⁵ զիրաւորաց եւ զազրս, դարին ովխարաց առան-] և զազրս լուանայք, և



1 1ս [/ / /] բ ընդ գիւ-
նի լՄՊԵՔ ՅՈՏՍ [ՄԱՐԴԿ?]-
15 ԱՆ ԵՒ ՈՉ ՍՈՍԿԱՐՅՔ ԵՒ-
[ԳԱՐՀԱՌԻԲԵՔ Ե-:
ԵՒ ԶԻ ՄԻՇ ԵԽՍ ՄԻ ԼԱՏ ՄԻՈԶ[Է]
ՀԱՐԿԱՆԻՈՐԻՑԻՄՔ ԱՍԵԼ ԵԵՒ-
ՌԿՐԱՄ ԹՈՒԵԼ ԶԱՆՁԳԱՅ
20 ԱՊՇՈՒԹԻՒԻՆ ՅԻՄԱՐՍՅ-
/ / / / / / / /

զկէսն առանձինն 6 յոտս մարդկան եւ ոչ սոսկայք եւ դարհուրիք] և ոչ զարհուրիք և սոսկայք
7 մի] (2 և տոլ+մի) 8 զանզպայ ապշութիւն յիմարս] զանզպայութիւնդ ձեր:




8038—815

- II 2р [ՎԱՐԴ]ԱՆ ԵՒ ՆՈՐԻԵՆ ՆՄԱ-
[ՆԻՔՆ], ՈՐՔ, ՈՉ ԿԱՐԱՑ'Ե-
[ԱԼՔ Ա.]ՅԱՊԻՍԻ ԽՈԲԵՈՒԹ[Ե]-
[ԱՆ] ՇԱԱՈԱՅԵԼ, ԲՈՂՈ-
5 [ՔԵՒՆ] ԶԵԶ ՀԱՆԱՊԱԶ, ԹԵԵ¹³
[ՍՈՒՏ] ԵՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻԴ
[ԶԵՐ] ԵՒ ՄԱՐԴՈՅ⁴ ԱՆՄՏ-
[ԱՅ Վ] Ի ԱԼՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ:
[ԵՒ ԶԼ]ՍԵՒՔԸ, ՎԱՍՆԵ ԶԻ ԲԻ-
10 [ՆՈՒԹ]ԻՒՆԴ ԶԻՐԱՒՈՒՆԾ ՈՉ
[ՏՈ.]⁸ ՃԱՆԱՋԵԼ, ՈՐՊԵՍ
[ԵՒ ԱՅ]ՃՄԴ ԻՄԿ ԶՃԱՆԱՋՐԵՔ¹⁹


1 նոցունց 2 հանապաղօր 3 թէ 4 մարդոց] 5 լոտիք 6 վասն] 7 բռնութիւնը 8 տան 9 ալճմդ





1 1ր / / / / / [ԽՈՍՍԱ-]
 3ԵԱԼՔ¹⁰ ՀԱՆՏՈՒԺԵԼ¹¹ [ԵՏՈ-]
 15 Ի ԶԱՆՉԻՆՍ¹² Ի ՄՈՀ ԵՒ ՊԵ-
 ՍԱԿԵՑԱՆ, ՈՐՈՑ ԳՈՐ-
 ՇՈՑ¹³ ԵՒ ՄԵՔ ՔԱԶԱԼԵԲԻԶՔ
 ԵԱՔ¹⁴ ԵՒ ԶԱՒՐԱՑՈՒՅԵԶՔ
 ՈՐՊԵՍ ԶԱՐԴԱՐ ՈՒՍՈՒՅԵ-
 20 ԶՈ ԵՒ ԶՃՄԱՐԻՏ ՎԱՐԴԱ-
 ՊԵՏՍ¹⁵.

իսկ շնանաշեր] ալմմ 10 / / / ցեալը] 11 Հանդուրժեալը 12+իրեանց 13 գործոց] 14 էաք 15
 եւ զարացուցիւր՝ որպէս զարդար ուսուցիչս եւ զճմարիտ վարդասկոս] և որդարն զճմարիտ
 վարդասկետք նոցա:



81₇₋₁₃

- II 1m / / / / / / /
ԲԵՐԱՆ ԳՈՎԵՑԻՆ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆՅԱՔՆ
ՄԵԾԱԶԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՎ
5 ԵՒ ՈՒՐԱԽ ԵՂԵՆ²:
ԵՒ ԼՈՒԵԱԼ ԶՄԵԾԱԲԱՐԲԱՌՈՎ³
ԳՈՎՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑՆ ԵՒ
ԶԲԵՐԿՐՈՒՄՆ ԵՐԵՍԱՅ ՆՇ-⁴
80. ՏԵՍԵԱԼ ԱՆԱԻՐԵՆ
10 ԻՇԽԱՆԵՆ⁵ ՄԵՐՀՆԵՐՍԵՀ⁶
ԵՒ ԱՅԴ ԱՒԱԳԱՆԻՈՅՆ⁷, ՈՐ ՆՇ-⁸
ՏԵԲԵՆ⁷ ԱՌԱՋԻ ՆՈՐԱ, Ի ՑՈ-

1 ամենայն] 2+լոյժ 3 իշխանին] 4 Միհրներսեհի 5 ալ 6+Աբեաց 7 նստէին

- | | |
|------|--|
| I 2ա | [ՍՈՒՄՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐ-]
ԳԼՈՒԽԱԼՎ Ա.ԱԷ ՅՆՈ [ՍՈ. 02] |
| 15 | ՀՐԱՄԱՅԵՆ ՄԵԶ ԱԻՐ[ԷՆՔՆ]
ՄԵՐ ՅԱՍՆՈՒԾ ՈՒՄԵՔ [ՄԻ-]
ՆԶ ԶԵՒ ԻՆՉ ԼՈՒԵԱԼ ԻՑԼ Ի
ԲԵՐԱՆՈՅ ՆՈՐԱ: ԱՐԴ, ՈՐ-
ՊԵՍՈՅ ԶՈՒԱՐԹԱՅԵԱԼՍ ԻՄԱ |
| 20 | ՏԵՍՍ.Ք ԶԶԵԶ ԸՆԴ ԻԱ-
ԽԱՍ ԱՇԽԱՀՈԿՈՐՈՅՆ: ԿՈՒՐԴ: 13 |

⁸ զրգական] եղիսակ] 9 իցէ] 10 որպէս] 11 իմ] իմն 12 աշխարհակորուսիդ 13 կոր [ուսիդ]

Բնականաբար, առաջին հերթին մեզ զրադեցնում է այն հարցը, թե առաջարկվող պատառիկը ի՞նչ է ական ճշգրտում է կատարում, բնագրական ի՞նչ աղավաղություններ է բացահայտում։ Փորձենք այդպիսիք վկայակոչել մեկ առ մեկ։

1. «Որ զիր զեղբայր և զժնօղ որպէս թշնամիս ծախէ, զի՞արդ նա զթշնամանիշս իւր և կամ զերկրպագուսն զիտէ պատուել և կամ թշնամանել. և դարձեալ յորմէ ծնանին՝ զնոյն ուտեն և անխնայ։ Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...» (80:25–28):

Այստեղ բնագրի ակներև խաթարում կա. Փարավեցու մոտ խոսվում է կրակի մասին, թվարկելով ու բացահայտելով նրա առաջացման ու «կորնշման» պարագաները, ուստի «ծնանին» և «ուտեն» հոգնակիությունը միանդամայն ավելորդ է, սխալ, մանավանդ որ՝ այդ նույն նախադասության մեջ կա «նաև նեթական (հուրը)։ Մեկ նախադասության սահմաններում, երբ խոսքը հրի հետ կապված գործողությունների մասին է, սպասելի չէր բայական դիմավոր և անդեմ ձևերի զուգահեռ գործածություն (պատուել և կամ թշնամանել... զնոյն ուտեն (resp. ուտէ)։ Ավելի բնականոն կլիներ այս դեպքում ևս ունենալ «ուտել»։ Ի վերջո, ամեննին անհասկանալի է «և անխնայ»-ն. նման որակումից հետո բայական շարունակություն էր անհրաժեշտ, փաստորին արտահայտությունը մնում է կիսավարտ, թեև հրատարակիչները վերջակետ են դրել²⁷։ Հաջորդ նախադասության սկիզբը ևս կասկած է հարուցում. նախ՝ շարադասական առումով նախընտրելի կլիներ ունենալ ոչ թե «Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...», այլ «Յամենայն նիւթս հուր ոչ պակասէ» կամ թեկուզ՝ «Յամենայն նիւթս ոչ պակասէ հուր», ապա՝ ընդգծված «ոչ պակասէ»-ն փաստորին նախադասության ընդհանուր և հիմնական իմաստին որևէ բան չի ավելացնում։ Գրաբարյան բնագրերի հմուտ ընթերցողը «Յամենայն նիւթս հուր» կարդալով էլ հասկանում է, որ խոսքը նյութերի՝ հուր առաջացնելու ընդունակության մասին է, հետեաբար՝ ամեն նյութի մեջ հուր լինելու։ Փարավեցին նախորդ հատվածում արդեն ասում է, թե «կրակ ի բազում նիւթոց լինի»։

Մեր պատառիկը ճշգրտում է վարելու թվարկած աղավաղումներն ու կաւածելի տեղիները. այստեղ «ուտեն»-ի փի. ունենք «ուտել», բացակայում է «և»-ը, որով դառնում է «ուտել անխնայ», իսկ «ոչ պակասէ»-ի փի. «ոչ պատկառէ», որ նախադասության շարունակությունն է և ոչ հաջորդի սկիզբը։ Քանի որ «պատկառէ» եղակի է, ուրեմն եղակի է դառնում նաև «ծնանին» (ծնանի)։ Պարզվում է, որ «ուտեն և անխնայ»-ի «և»-ը ոչ թե ավելորդ է, այլ «և ապականել»-ի տեղահան եղած մնացուկը։ Ինչ վերաբերում է «ոչ պակասէ»-ին, ապա խաթարված կոնտեքստում «ոչ պատկառէ»-ն գրչական հիմքի վրա գիտակցվել է իբրև «ոչ պակասէ»։ Այսպիսով, Փարավեցու ընդամենը մեկ նախադասություն կազմող հատվածում առկա է մի քանի աղավաղում՝ մեկը մյուսին հեցած։ Պատառիկը ճշգրտում է այդ ամենը։ Այսուհետեւ պետք է կարդալ. «...և դարձեալ, յումէ ծնանի՝ զնոյն ուտել յանխնայ և ապականել ոչ պատկառէ։ Արդ, յամենայն նիւթս նուր...»։

27 Տողատակին գրելով «թերևս ուղղելի զնոյն ուտէ նա անխնայ»։

2. «...ապա ուրեմն ամենայն նիւթք երկրի աստուածք, ապա թէ այդպէս գիտէք, ընդէ՞ր կուրացեալ մտօք զկէս մասն անուանէք աստուածք, և զկէսն յաղտեղի գործ ծախեալ թշնամանէք...» (8028—31):

Ի տարբերություն նախորդ հատվածի, այստեղ քերականական, ոճական կամ այլ խաթարում գրեթե չի նկատվում, ուստի առանց հին և հավաստի աղբյուր ունենալու կարելի չէ միջամտել: Միակ ակներեւ սրբազրելիքը «երկրի»-ն է: Խոսքը ոչ թե երկրի նյութերի, այլ՝ երկրում ևդած նյութերի (առարկաների) մասին է, ուստի պետք է լիներ «յերկրի», ինչպես որ կա գիտական հրատարակության հիմք ձեռագրում, բայց հրատարակիչները շգփտես ինչու նախընտրելի չեն համարել: Նորահայտ պատառիկը ևս հավաստում է տողատակ իշեցված «յերկրի» ձևի նախնականությունը: Շարունակության մեջ հականառողը թույլ է տալիս եզրակացության այնպիսի ուղղագծություն, որ դժվար չէր լինի միտումնավորությամբ բացատրել. եթե բոլոր նյութերի (առարկաների, իրերի) մեջ հուր կա, ապա դրանք բոլորը աստվածներ են, իսկ եթե այդպես է՝ ինչո՞ւ են կես մասը միայն համարում, իսկ կեսը՝ «յաղտեղի գործ ծախեալ թշնամանէք»: Պատառիկում նման ուղղագծություն շկա, և հականառությունն ավելի պատճառաբանված է, «զկէս մասն յաստուծոյ պատուեալ՝ ի շրեղութեան գործ մատուցանէք, զկէսն՝ ծախեալ թշնամանէք»: Սակայն պատառիկի տարբերությունը միայն վկայակոչվածով չի ավարտվում: Հարցումով ժխտման անցնելուց առաջ (ընդէ՞ր) այստեղ կա մի ուշագրավ տող՝ «որպէս եւ էդ իսկ եւ տեսանէք», որով ակնարկվում է, թե ոչ միայն դուք այդպես եք ճանաշում («այդպէս զիտէք»), այլ, ըստ ձեր պնդման, իրականում այդպես էլ կա ու տեսնում եք: Ճարտասանական արվեստի մասնագետները հավանաբար այստեղ նախընտրելի եղանակ կտեսնեն:

Ի վերջո, մեկ դիտողություն ևս. գիտական բնագրի հրատարակիչները վկայակոչվող հատվածի երկրորդ «աստուածք» բառը համարել են կասկածելի ուղղագրական ձև ունեցող (գրել են աստղանիշով): Պատառիկի ուսումնասիրությունից պարզվում է, որ սկզբնական բնագրում եղել է «յաստուածոցն» և որ նախադասության այդ մասը հետագայում խմբագրվել է:

3. «...ուսպէս յաղիւոց և ի բարանց զկէսս ապարանս շինէք, և զկէսս տունս դաշտանաց և աղտեղուրեան շինէք» (8031—32):

Նախ դիտենք, որ Փարակեցու մոտ շարունակվում է հարցում-բանավեճը, իսկ այդ նշանակում է, թե «որպէս»-ի վրա հարցական նշան պետք է դրվի: Կարծում ենք, որ «կէս»-ի հոգնակի հայցականը (զկէսս) լրիվ չի բացահայտում հեղինակի միտքը. Հարկավ ավելի ճիշտ կլիներ ասել «քարերի կեսից ապարանք եք շինում», քան «քարերի կեսը ապարանք եք շինում»: Պատառիկում գտնում ենք նախընտրելի համարված ձևը՝ «ի կիսոցն»: Շարունակության մեջ ևս տարբերություն կա. գիտական բնագրի «ապարանս շինէք»-ի փոխարեն պատառիկը տալիս է առավել ընդգրկուն մի արտահայտություն. «ապարանս եւ սենեակս թագաւորաց եւ իշխանաց շինէք»: Այստեղ կարելի է պիճել, թի որն է նախնական, թեև նրանց միջև իմաստային էական տարբերություն չկա, պատառիկում մասնավորեցումն ընդգծված է: Ներկա դեպքում էլ մենք նախընտրությունը տալիս ենք նորահայտին, որովհետեւ տրամաբանական է են-

թաղրել, թե զիտական հրատարակության հիմք ձեռագրի բնդօրինակողը վրի-
պել է և բաց թողել երկայուն ձեռագրի մեկ տող՝ ԵՒ ՍԵՆԵՇԿՍ ԹԱԳԱՀԱՌԱՅՑ ԵՒ
ԻՇԽԱՆԱՅՑ: Նախադասության շարունակության մեջ ևս նկատելի տարրերու-
թյուն կա. «և զկէսս տունս դաշտանաց և աղտեղութեան շինէք»-ի փոխարեն
այստեղ կարդում ենք. «Եւ ի կիսոցն՝ որմ սնատանց և դաշտանատանց կար-
գեալը յաւրինին»: «Զկէսս» և «ի կիսոցն»-ի միջև եղած տարրերության մասին
արդեն խոսվեց, դառնալով շարունակությանը՝ կարող ենք վստահությամբ տ-
սել, որ նախընտրելին պատառիկի բնթերցումն է: Քանի որ խոսքը աղյուսի ու
բարի մասին է, հարկավ, ճիշտ կլիներ «որմ» բնթերցումը, մանավանդ որ՝
հաջորդ բառերը տերմիններ են (սնատուն, դաշտանատուն): Ի վերջո, նախնա-
կան համարելու մեկ կովան ևս կա. Փարավեցու լեզվին և ոճին խորի է բառա-
կան կրկնությունը նախադասության մի հատվածում, իսկ զիտական բնագրում
այդ անհարիրությունը կա (ապարանս շինէք... և... տուն... աղտեղութեան շի-
նէք), մինչդեռ նոր բնագրում, առկա է կատարելապես հոմանիշ ուրիշ բառ՝
կարգել, յաւրինել (կարգեալք յաւրինին):

4. «և յարծաթոյ զկէսս ըմպելիս կազմէք, և զկէսս անօրս աղտեղութեան կազմէք» (80_{32–33}):

Ափսոսանքով պետք է նշել, որ պատառիկում մեկ տող կտրված ընկած
է, ուստի դժվարանում ենք ասել, թե վկայակոչված այս նախադասության
սկզբի բառերը (և յարծաթոյ զկէսս) արդյո՞ք նույնությամբ են եղել այնտեղ:
Դատելով նախորդ օրինակից, զիտական բնագրի «զկէսս»-ի փոխարեն «ի կի-
սոցն» պիտի ունենալիքնը: Կարենը է հետեւալ պարագան. ինչպես ասվեց, նույն
նախադասության մեջ բառական կրկնությունը Փարավեցու ոճին առանձնահա-
տուկ չէ, մինչդեռ այստեղ նորից ունենք «ըմպելիս կազմէք» և «անօթս... կազ-
մէք»: Պատառիկը ճշտում է ոճական այդ խաթարումը, մի դեպքում տալով
«յաւրինէք», մյուսում՝ «կազմէք», որ և նախընտրելի է: «Ըմպելիք» բառի փո-
խարեն (ըմպակ, բաժակ) պատառիկը տալիս է «Հանդերձը մեծապայծառք»,
ուր «Հանդերձ» նշանակում է արծաթից պատրաստված «սպասք, զարդ»²⁸, այն
էլ՝ մեծապայծառ: Նախադասության երկրորդ կեսի «անօթս աղտեղութեան»
արտահայտության դիմաց պատառիկը տալիս է նրանց իրական անվանումը՝
«խաւզամանս և խրլնանոցս արարեալ կազմէք»: Դժվար չէ կուահել, որ Փար-
ավեցու պատմության հետագա խմբագիրները աշխատել են խուսափել նման
տհաճ մասնավորեցումից. ի դեպ, շնոր կարող հակառակը պնդել, որովհետեւ
«խաւզաման» և «խրլնանոց» բառերը մեր մատենագրության մեջ սովորական և
տարածուն գործածություն չունեն, հետեւարար ուշ շրջանի արտագրություն շնոր-
լինել:

Եթե առաջարկվող սրբագրություն-փոփոխությունները արտացոլենք զի-
տական տեքստում, ապա կունենանք. «Եւ [ի միոյն] արծարոյ նանդերձս մե-
ծապայծառ յաւրինէք, ընդ նմին՝ խաւզամանս և խրլնանոցս արարեալ կազ-
մէք»:

Նկատենք, որ վերականգնման մեջ մեկ հիմնական պայմանականություն
կա՝ ի միոյն: Նախադասության երկրորդ կեսի «զկէսս»-ը պատառիկում չկա,

ուրեմն այն շկար և սկզբում, ապա «[ընդ ն]մին»-ի գոյությունը փաստում է, որ խոսքը նույն արծաթից պատրաստելու մասին է և ոչ՝ կիսից այս, կիսից՝ այն լինելու, թեև բուն միտքը մնում է նույնը:

5. «Հրով՝ աստուածոցն զարշառս և զոշխարս խորովէք և եփէք» (80₃₃—34):

Պատառիկը այս նախադասության մեջ ավելացնում է՝ «անուանեալս, ի ձենչ պատուածս»: Նկատելու է, որ ավելացվողը նրկաթագիր մեկ տող կարող էր կազմել, ուստի, հավանաբար, վրիսմամբ բաց է թողվել: Նման դեպքեր շատ են հայտնի, ընդ որում տողը վերաբերում է «արջառ»-ին (զարշառ անուանեալս, ի ձենչ պատուածս):

6. «և զրով՝ զդաշտանս և զթարախս և զաղբս լուանայք, և զիշսն առանձինն և կամ խառնեալ ընդ զինի՝ ըմալէք, և ոչ զարհուրիք և սոսկայք» (80₃₄—36):

Սույն հատվածում ևս խաթարում կա, սկզբում խոսում է զրի մասին ընդհանրապես և ապա՝ կեսի, մինչդեռ համարնույթ նախորդ վկայակոչություններից գիտենք, որ Փարակեցին վիճելիքը ակներև դարձնելու համար նախընտրում է ասել՝ կեսից այս եք անում, կեսից՝ այս: Այստեղ ևս նման հարցադրում էր սպասվում: Նորահայտ պատառիկը լիովին հաստատում է սրբագրելիքը՝ «ի զրոց կիսոցն»: Սակայն շարունակության մեջ ինքը պատառիկն է խաթարված, ավելի ճիշտ՝ ընդօրինակելիս բաց է թողած մեկ տող, ուր պարտադիր սկսութ է լիներ «լուանայք» ստորոգյալը և «ի կիսոցն» հարաբերողը: Առայժմ անբացատրելի է մնում «արին ոշխարաց ա[...]» տողը. Եթե ենթադրենք, որ նախորդ տողի վերջում «զ» նախդիր է եղել, ապա պարզապես շարունակվում է թվարկումը (զդաշտան..., զարին ոշխարաց), իսկ եթե ոչ՝ ապա այդ տողը կապվելու է «խառնեալ ընդ զինի՝ ըմալէք» արտահայտությանը: Մենք հակված ենք զեպի առաջին ենթադրությունների և տողիմաստի վերականգնումը համարում ենք քննելի: Պատառիկի ընձեռած մյուս տարբնթերցումները սկզբունքային չեն, իսկ ետևառաջությունների առկայությունը իմաստային փոփոխություն չի բերում: Թեական ենք համարում և «յոտս [մարդկան] վերականգնումը (մարդկանց առաջ, ներկայությամբ), ուստի վաղաժամ է այն զիտական տերստ մտցնել: Ակներև է, սակայն, որ նախադասության այդ մասում էլ որոշակի տարբնթերցումներ են եղել:

Այսպիսով, վկայակոչված հատվածում ընդամենը մեկ-երկու սրբագրությացում է կատարվում:

7. «Եւ զի՝ ևս մի ըստ միոցէ հարկաւորիցիմք ասել և կամ թուել զանզայուրին ձեր» (80₃₆—37):

Դիտական ընագրի հրատարակիչները, ընդունելով ն. Բյուզանդացու առաջարկած ոճական սրբագրությունը՝ «Եւ զի՝ ևս մի ըստ միոցէ»²⁹, ձեռագրերի «Եւ զի մի ևս միոցէ» ընթերցումը տողատակ են իշեցրել: Պատառիկը

29 Ն. Բյուզանդացի, Հայկական բառաքննություն, Կ. Պոլիս, 1880, էջ 82:

լիապես նույնական է ձեռադրերի հետ: Հավաստիանալու համար, թե տարբերակներից որն է ճիշտ, պետք է պարզել նախադասության բնույթը. եթե այն հարցական է, ապա ճիշտը Բյուզանդացու առաջարկած ուղղումն է «Եւ զի՞ ևս...», բայց նույնքան և ավելի տեղին է հրամայական-արգելական ոճի կիրառումն այստեղ՝ «Եւ զի մի՛ ևս մի ըստ միոչէ» (իմա՞ և որպեսզի մեկ առ մեկ հարկադրված շինենք պատմել): Եվ իրոք, Փարագեցին կտրուկ եղանակով վկայակոչում է Վարդանին ու Վարդանանց, որոնք հրաժարվել են այդ խարեւիլյանը ծառայելուց: Նման ընկալման դեպքում բնագիրը սրբազնելու անհրաժեշտությունը վերանում է, մանավանդ որ պատառիկը ևս հաստատում է այդ: Ի դեպ, հրատարակիչները ուշադրություն շեն դարձրել, որ Բյուզանդացին օգտվել է այն ձեռագրից, ուր «զի» չի եղել, ուստի նրա գոյությունը ենթադրող գիտնականը անհրաժեշտ է համարել «զի» սրբագրել այնտեղ առկա «մի»-ն: Երբ ձեռագրում «զի» կար, սրբագրելիք այլևս ոչինչ չէր մնում, մանավանդ որ Ն. Բյուզանդացին բավական թեական է հարցադրում: Փաստորեն նրա առաջարկությունը ճիշտ է, բայց ոչ փոխանակ «մի»-ի: 1904 թ. հրատարակության «զանգվայրութիւնոց»-ի դիմաց պատառիկն ունի «զանզվայ ապշութիւն լիմարս», որ հետաքրիր է իրու տարբներցանության փաստ, թեև ըստ իմաստի նույնական:

8. «զոր արթուն և քաջ նահատակն Վարդան և նոցունց նմանիքն, որք ոչ կարացեալք այսպիսի խարէութեան ծառայել՝ բողոքէին ձեզ հանապազօր, թէ սուտ են պաշտամունքդ ձեր և անմտաց վարդապետութիւնը և շլտէիք» (80₃₇—81₂):

Նախապես դիտենք, որ «զոր արթուն և քաջ նահատակն» հատվածը պատառիկում չի ներկայացված՝ տողի անկման հետևանքով: Թյուրիմացություն պետք է համարել «նոցունց» բառի գոյությունը, որովհետև մինչև այդ վկայակոչված է «արթուն և քաջ նահատակն Վարդան», իսկ խոսքը նրա նմանների մասին է և ոչ՝ նրանց նմանների: Պատառիկը պահպանի է ճիշտ ու նախնական ընթերցումը՝ «նորին»: Նախընտրելի ենք համարում նաև պատառիկի «հանպազ»-ը, թեև դրանով բուն տեքստը որևէ իմաստային փոփոխության չի ենթարկվում (հանապազօր):

Ըստ պատառիկի, «անմտաց»-ից առաջ պետք է դրվի «մարդոց» (մարդոց անմտաց), որ միտքն ավելի պարզ է դարձնում:

9. «զի բռնուրինք՝ զիրաւունս ոչ տան ճանաշել, որպէս և այժմ» (81₂—3):

Նախ արծանագրենք, որ «զի»-ի փոխարեն պատառիկում ունենք «վասն զի», իսկ ապա, դատելով ողջ շարադրանքից, «բռնուրինք» հոգնակի ձեւի անհրաժեշտություն չկա, քանի որ առհասարակ բռնուրինքն է վերաբերում, այդ պատճառով էլ պատառիկի «բռնուրինք» եզակին ավելի տեղին ու նախընտրելի է: Հարկ չկա բացատրելու, որ ինքնին կվերանայվի և «տան»-ը, դառնալով «տա», ինչպես որ կա պատառիկում: Ի դեպ, վերջինիս մեջ բնագիրն ավելի որոշակի ու ավարտուն է: գիտական հրատարակության «որպէս և այժմ»-ի դիմաց այստեղ կարդում ենք. «որպէս և այժմ» իսկ շանաշէք»: Վերջին բառը կրկնություն համարել շենք կարող, քանի որ արդեն դիմավոր ձեն է գործած-

մած, իսկ հատվածի բուն նպատակն էլ այդ է՝ այժմ էլ եք բռնություն գործադրում, ուստի իրավունք չեք հանաշում։ Մասնակի սրբազրումներով, բերված հատվածը կլինի. «Վասն զի բնուրիին զիրաւունս ոչ տա նանաշել, որպէս և այժմդ իսկ շնանաշէք»։

10. «Յաղագս որոյ ոչ նանդութեալք՝ ետուն զանձինս իւրեանց ի մահ և պսակեցան, որոց և մեք բաջակերիչք էամ և արդարի ճշմարիտ վարդապետք նոցա» (813-5):

Թեև պատառիկի առաջին տողը չի պահպանվել, այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ այնտեղ որոշ տարբնթերցում եղել է. այդ որոշակի երեսմ է «ցեալք» բառակեսից, որ ամբողջության մեջ պիտի լիներ «խոստացեալք»։ Իսկ նման պարագայում միանգամայն հասկանալի է «Հանդուրժել» (զրված է «Հանտուժել») անորոշ ձևի գործածությունը։ Որեէ սկզբունքային բան չենք տեսնում «փրեանց»-ի լինել-շինելու մեջ։ Իբրև շատ ավելի վաղ շրջանի ձեռագրի ընթերցում բառիս շինելը կարելի է նախնական համարել։ Նույնը չի կարելի ասել շարունակության մասին. «որոց և մեք բաջակերիչք էաք»-ը բավական անորոշ է, մինչդեռ հեղինակի խոսքը նրանց գործի (=շհանդուրժելու, նահատակության) մասին է, ինչպես որ գտնում ենք պատառիկում՝ «որոց գործոց և մեք բաջակերիչք եաք և զաւրացուցիչք»։ Եթե հիշենք, որ այս խոսքերն ասողը «ամենասուրբ երէց Աւոնդն» է, ապա հասկանալի կդառնա և «զաւրացուցիչք» լինելը, ինչպիսիք իսկապես էին Աւոնդն ու Աւոնդյանք։ Շարունակության մեջ ընազրային խաթարում է տեղի ունեցել։ Փարպեցու խոսքը ոչ թե «արդարի ճշմարիտ վարդապետք» լինելուն է վերաբերում, այլ «արդար ուսուցիչք և ճշմարիտ վարդապետք» հանդիսանալուն, ինչպես և կա նորահայտ պատառիկում։ Խաթարումն առաջացել է շատ սովորական ճանապարհով. ընդօրինակություն վրիպմամբ բաց է թողել «ուսուցիչք»-ը և ակամայից ստացել «արդարե» (արդար+եւ)։ Հետագա ընդօրինակությունների ժամանակ այլևս ոճական հարթեցում է տեղի ունեցել, որը և հասցը է զիտական հրատարակությունում առկա ձևին։ Հարկավ, անհրաժեշտ է սրբագրել հատվածը։

11. «Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ առն աստուծոյ Աւոնդի՝ որպէս ընդ մի բերան գովեցին սուրբ բահանայքն մեծաձայն բարբառով և ուրախ եղեն յոյժ» (816-8):

Հայտնի է, որ վաղ միջնադարյան բնտպերի հետագա փոփոխության պատճառներից մեկը լուսանցազրությունների ներառումն է բնագրի մեջ, ներկա դեսպում գործ ունենք հենց այդպիսի բացորոշ լուսանցազրության հետ՝ «զայս ամենայն սրբոյն առն աստուծոյ Աւոնդի», զրված՝ Աւոնդ երեցի խոսքի վերջը շեշտած լինելու համար։ Պատառիկը զերծ է այդ բնդմիշարկությունից, և շպահպանված մեկ տողում կարող էր տեղավորվել միայն «Եւ ասացեալ, որպէս ընդ մի»։ Այս տողի առկայությունը պարզորշ է դառնում հաջորդ տողի սկսվածքից՝ բերան գովեցին..., իբրև «ընդ մի բերան»-ի շարունակության։

Հաջորդ լրացում-ճշգրտումը սոսկ բառական է և ոչ էական. «սուրբ բահանայքն»-ի փոխարեն պատառիկը տալիս է «ամենայն սուրբ բահանայքն», «ուրախ եղեն յոյժ»-ի փոխարեն՝ «ուրախ եղեն»։ Սրանք ապացուցելի ճշգրի-

տումներ չեն, քանի որ որևէ երանդ չեն փոխում, բայց որովհետև դանում ենք պիտական հրատարակության հիմք ձեռագրից շուրջ 600—700 տարի առաջ գրված պատառիկում՝ ընդունելի ու նկատելի են:

12. «Եւ լուեալ զմեծաբարբառ գովութիւն սրբոցն, և զրերկրումն երեսաց նոցա տեսեալ անօրէն Միհրներսեհի և այլ աւագանոյն Արեաց, որ նստէին առաջին նորա՝ ի ցասումն բարկութեան եղեալ, ասէ ցնոսա» (81₈—11):

Սույն հատվածում էական փոփոխությունների անհրաժեշտություն չկա, իսկ պատառիկի ունեցած տարբերությունները աննշան են. այստեղ հրատարակության «անօրէն Միհրներսեհի» դիմաց առկա է «անաւրէն իշխանին Միհրներսեհ» (գրված է՝ Միհրներսեհ), որ առումով ավելի հարազատ է շարունակությանը՝ «աւագանոյն»։ Փարագեցին այդպիսի արտահայտություններ ուրիշ հատվածներում էլ ունի, այսպես՝ «Եւ լուեալ... հազարապետին Արեաց Միհրներսեհի, և զամենայն դրանն աւագանոյն...» (Էջ 79 22—24):

Էական չէ նաև «արեաց» բառի գոյություն-չգոյությունը. պատառիկը այն չունի: Կարծում ենք, որ ելնելով Փարագեցու մասնավորեցման սկզբունքից, կարելի է համարել բնագրային, իսկ չգոյությունը պատառիկում՝ երբեմնի գրշական վրիպման արդյունք:

Միակ համեմատաբար կարելոր տարբերությունը «գրգռեալ» թե «եղեալ» բառերի մեջ է. ո՞րն է ձիշտ՝ «ի ցասումն բարկութեան եղեալ», թե՝ «ի ցասումն բարկութեան գրգռեալ»։ Դատելով երկախոսությունների՝ նախորդ հատվածների գոյության փաստից՝ նախընտրելին «գրգռեալ»-ն է, քանի որ մինչ այդ բառերի մեջ է. ո՞րն է ձիշտ՝ «ի ցասումն բարկութեան եղեալ», թե՝ «ի ցասումն մեջ»։

Ուրեմն, քիչ թե շատ կարելոր առաջարկելիք փոփոխությունը բերված հատվածում «իշխանին» բառի մուծումն է բնագիր և «եղեալ»-ի փոխարինումը «գրգռեալ»-ով։

13. «Ոչ համայն մեզ օրէնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չե ինչ լուեալ ի բերանոյ նորա. այդ՝ զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խօսս աշխարհակորուսիդ այդորիկ...» (81₁₁—13):

Վկայակումած հատվածի միտքը միանգամայն հասկանալի է, սակայն, կարծում ենք, «մինչ չե ինչ լուեալ ի բերանոյ նորա»-ն ավելի հստակ ու մեկին կլիներ, եթե «լուեալ»-ից հետո ունենայինք «իցէ»։ Պրանով և՛ քերականորեն, և՛ իմաստային առումով բնագիրը պարզ կհնչեր։ Բարեբախտաբար պատառիկը այդ ընթերցումն ունի, որը և պետք է մուծվի բնագիր։ Սակայն նույնը չենք կարող ասել հաջորդ տարբերության մասին։ Միհրներսեհը Ղեռնդ երեցին հարցնում-հանդիմանում է, թե «ընդ խօսս աշխարհակորուսիդ» ձեզ «զուարթացեալ իմն տեսաք», որ նշանակում է՝ մի տեսակ զվարթացած, զրեթե զվարթացած, նույնիսկ (անգամ) զվարթացած։ Ըստ բնագրի «իմն»-ի գործածությունը միանգամայն տեղին է, իսկ պատառիկի «զուարթացեալս իմ»-ը (իման զվարթացեալս)՝ ակների սխալ, քանի որ ստորոգյալը հոգնակի է (տեսաք), ուրեմն այդպես ընկալելու համար «մեր» պիտի ունենայինք։

Համեմատաբար էական այլընթերցում ունենք (ճիշտի՝ պիտի ունենալինք) «աշխարհակորուսիդ» բառից հետո: Այստեղ կարգում ենք. «ընդ խաւսս աշխահակորոյս կոր...», որ պիտի շարունակվեր «կործանումի այգորիկ»: Թե ի՞նչ նորություն կրերեր հիշյալ շարունակությունը՝ դժվար է ասել: Դատելով «աշխարհակորուսիդ» և «աշխալը հակորոյս» բառերի վերջավորության տարբերությունից, կարելի է ենթադրել, որ պատառիկի տեքստում մի փոքր ավելի նկարագրական արտահայտություն է եղել:

Այսպիսով, հիշյալ ճշգրտումները ի մի բերելով՝ կարելի է Փարագեցու պատմության հատվածը սրբագրել այսպես.

«...և դարձեալ, յորմէ ծնանի՝ զնոյն ուտել անխնայ և ապականել ոչ պատկառէ: Արդ, յամենայն նիւթս հուր, ապա ուրեմն՝ ամենայն նիւթը յերկրի աստուածք. ապա թէ այգալէս գիտէք, որպէս և էղ իսկ և տեսանէք, ընդէ՞ր կուրացեալ մտաւք զկէս մասն յաստուծոցն պատուեալ ի շրեզութեան գործ մատուցանէք, զկէսն՝ ծախեալ թշնամանէք: Որպէ՞ս յաղիւսց և ի քարանց ի կիսոցն ապարանս և սենեակս թագաւորաց շինէք, և ի կիսոցն՝ որմ սնատանց և դաշտանատանց կարգեալք յաւրինին: Որպէ՞ս ի միոյն արծաթոյ (?) հանդերձս մեծապայծառս յաւրինէք, ընդ նմին՝ խաւդամանս և խնանոցս արարեալ կազմէք: Հրով՝ աստուածոցն զոշխարս և զարգառ անուանեալս, ի ձենջ պատուածս խորովէք և եփէք, ի ջրոց կիսոցն՝ զդաշտանս և զթարախս վիրաւորաց և զաղրս լուանալք և զկէսն՝ տուանձինն և կամ խառնեալ ընդ զինի, ըմպէք յուսս մարդկան (?), և ոչ սոսկայք և զարհուրիք:

Եւ զի մի՛ ևս մի բար միոցէ հարկաւորիցիմք ասել և կամ թուել զանգդայ ապշութիւն յիմարս, զոր արթուն և քաջ նահատակն Վարդան և նորին նմանիքն, որք՝ ոչ կարացեալք այսպիսի խարէութեան ծառայել, բողոքէին ձեզ հանապազ, թէ՝ սուս են պաշտամունքդ ձեր և մարդոց անմտաց վարդապետութիւնք: Եւ շլսէիք, վասն զի բռնութիւն զիրաւունս ոչ տա ճանաշել, որպէս և այժմդ իսկ չճանաշէք: Յաղագս որոյ ոչ խոստացեալք հանդուրժել՝ ետուն զանձինս ի մահ և պսակեցան, որոց գործոց և մեր քաջալերիչք էաք և զաւրացուցիչք՝ որպէս զարդար ուսուցիչս և ղճշմարիտ վարդապետս:

Եւ ասացեալ՝ որպէս ընդ մի բերան, զովեցին ամենայն սուրբ քաշանայքն մեծաձայն բարբառով և ուրախ եղեն: Եւ լուեալ զմեծաբարբառ դովութիւն սրբոցն և զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անաւրէն իշխանին Միհրներսիհ և այլ աւագանույն Արեաց, որ նստէին առաջի նորա՝ ի ցասումն բարկութեան զրգուեալ, ասէ ցնոսա. «Ոչ հրամայեն մեզ աւրէնին մեր ցասնուլ ումեք, մինչ չե ինչ լուեալ իցէ ի բերանոյ նորա: Արդ՝ զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խաւսս աշխարհակորոյս կործանումիդ այգորիկ...»:

Հին պատառիկների ուսումնասիրությունը ուշագրավ է նաև հայոց լեզվի պատմության առումով: Այստեղ ակնկալելի են բառազանձային նորույթներ, քերականական ինքնատիպություններ, վաղ շրջանի բարբառայնություններ և այլն: Պարզվում է, որ Փարագեցու Պատմության այս ոչ մեծածավալ պատառիկը նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում և նշված խնդրի առնչությամբ: Ուսումնասիրությունն այստեղ բացահայտեց այնպիսի նոր բառեր կամ

բառարդություններ, որոնք արձանագրված շեն մեր առավել հեղինակավոր բառարաններում: Ստորև վկայակոչենք այդ բառերը:

Անառուն. ՆՀԲ-ը և Մալխասյանցը շունեն, բառիս գոյությունն առաջին անգամ է արձանագրվում: Դատելով գործածության տեղից՝ որոշակի իմաստ ունեցող տերմին է (ի կիսոցն որմ սնատանց և...): Փոխարինում է Փարպեցու գիտական հրատարակության մեջ եղած «տուն աղտեղութեան» հասկացողությանը: Դիտելու է, որ «աղտեղութիւն» բառը գործածական է այլևս իմաստով՝ աղտ, աղտեղություն, արտ, աղբ, անսրբություն, պղծություն (ՆՀԲ, I, 45): Սակայն շնչ կարող այս նշանակություններից որևէ մեկը դիտել իրեւ «սին» բառի լիարժեք հոմանիշ, որ նշանակում է՝ սնոտի, ունայն, թափուր, զուր, դատարկ, նանիր: Թերևս կարելի է ենթադրել, թե «սնատուն» ասելով ինչ-որ պաշտամունքային կառուց, տեղի նկատի ունի, որին գերադասում է «սին» հորջորջել: Բայց նման ենթադրությունը տերստից շի բխում. այստեղ «սնատուն» ու «դաշտանատունը», երկուսն էլ իրեւ «աղտեղության տուն», հակադրված են «ապարանքներին» ու թագավորաց կամ իշխանաց «սննյակներին», որոնք նույն քարով են կառուցվում: Ուրեմն՝ խոսքը կոնկրետ նշանակություն ունեցող հաստատության, տերմինի մասին է: Քանի որ Պարսկաստանում «դաշտանատունը» իրոք կային, ուրեմն եղել են նաև «սնատուներ»: Նախապես մենք նույնիսկ հակած էինք կարծելու, թե զործ ունենք ոչ թե «սին», այլ «սին» բառի հետ, որ մեկ անգամ գործածված է մեր մատենագրության մեջ և նույնանում է վրացերեն Եցնօ-ին (ախտ, հիվանդություն իմաստով)³⁰: Իշարկե, շատ հարմար կլիներ «սնատունը», հասկանալ իրեւ «ախտատուն», «հիվանդատուն», «բորբոտանոց» և այլն, բայց ինչպես կարող էր հայերենում «սին»-ը «սին» դառնալ, ինչ վրացերենում բնականոն է (Հմմտ. Խնջջօն): Կարծում ենք, որ բառու դեռ կաբոտ է իմաստի ճշտման:

Դաշտանատուն. Վերոհիշյալ բառարանները այսպիսի բառ չգիտեն, թեև նրա բաղադրիչները առանձին-առանձին քաջ հայտնի են. ՆՀԲ-ում (I, 595) և այլուր վկայակոչված է և Փարպեցու բնագիրը, ուր այս բառը հանդիպում է երկու անգամ: Ի տարրերություն նախորդի, այս բառի իմաստը շատ որոշակի է, և նորը ոչ թե բառիմաստն է, այլ ինքը բառարդությունը (գիտ, հրատ. մեջ ունենինք՝ տուն դաշտանաց, պատառիկում՝ դաշտանատուն)³¹:

Խաղաման. Նախորդի նման բաղադրիչներով հայտնի բառ է, իսկ բառարդումը՝ անծանոթ բառարանագիրներին: «Խաղամ»-ը (խօղ) նույն «խօխ», «խուխ» բառն է (բարբառներում՝ «խորխ»): «Խաղամ»-ը բառիս ոչ հաճախադես դործածվող ձևն է, որանով իսկ ուշադրավ³²: Ինչպես արդեն նշել

³⁰ Յանուար Արքայի աշխարհական գույքի մասին առաջնահանձնությունը (1955, օգ. 218₄, Հմմտ. Հ. Անապյան, ՀԱԲ, VI, 182): Այստեղ տրված ստուգաբանությունը (Շահ-Զերա) համոզիշ չէ (այդ մասին գրում է ինքը Հ. Անապյանը, տե՛ս նրա՝ Հայոց լեզվի պատմություն, II, Երևան, 1951, էջ 225), հմմտ. Ի. Արուլանը, Քարթլիս ցիոնվերայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, «Գիտ. Այութերի ժողովածու», № 1, 1941, էջ 39:

³¹ Հ. Անապյանը ստուն դաշտանաց-ը բացարում է իրեւ «արտաքնոց» (ՀԱԲ, II, 412), որ համոզիշ չէ:

³² Հմմտ. Խորայր Բյուզանդացի, Հայկական բառարաննութիւն, էջ 76 (№ 72):

ենք, «խաւզաման» ունեցող նախաղասությունը Փարավեցու հրատարակության մեջ չկա, իսկ քանի որ այլուստ հայտնի չէ, ապա առ այսօր հայտնի գործածության միտք դեպքն է: Դժբախտաբար, մենք հնարավորություն շունենք ճշտելու, թէ ամանիս գոյությունը հայտնի՞ է պահապերնենին կամ հնագիտությանը, իսկապէ՞ս խաղղիսում-ը ծագում է պըսկի. շահ-ից³³: Խ(ը)լնանոց. Գործածված է «խաւզաման»-ի հետ նույն նախաղասության մեջ. իրրե հավասարապես աղտեղի, անարժան աման: Առաջին կեսը «խլիք» կամ «խլինք» բառն է, եղական ձևը՝ խլին: Բառարաններին «խ(ը)լնանոց» բառն անծանոթ է, «ը» գաղտնավանկի բացումը պայմանավորված է այլ ձայնավորների շղոյությամբ և ոչ տողադարձով կամ դրշության հետ կատված այլ պարագայով:

Այսպիսով, վկայակոչված շորս բառն էլ անծանոթ է մեր բառարանագրությանը և նորույթ լեզվի բառագանձում, կամ, ինչպես լեզվաբանական գրականության մեջ է ասվում՝ նորագյուտ բառ:

Այժմ անդրադառնանք բարբառային ձևերի գործածության փաստին: Վաղ շրջանի պատառիկներում, հասկանալի պատճառով, այդպիսիք քիչ են սպասելի, բայց այնուամենայնիվ՝ կան: Արդեն նշել ենք, որ հրապարակի վրա եղած «Յաղագս որոյ ոչ հանդուրժեալք՝ ետուն զանձինս իւրեանց ի մահ...» (813—4) նախաղասությունը մեր պատառիկում այլ խմբագրությամբ է ներկայացված՝ «[Յաղագս որոյ ոչ խոստա]ցեալք հանտուժել՝ ետուն զանձինս ի մահ...» (I, 1): Թէ ինչում է կայանում շարադրական տարրերությունը՝ վերելում նշվեց: Այսուղ ուշագրավը «Հանտուժել» ձեն է: Բառ վկայված է V դարի հուշարձաններով՝ իրրե «Հանդուրժել»³⁴, իսկ Փարավեցու պատառիկում, գրավոր մատենագրության մեջ առաջին անգամ, հանդես է գալիս դ>տ խլացմամբ և «ո»-ի անկմամբ՝ հանտուժել: Արդ, ինչպես բացատրել այս փոփոխությունը: Կարող է լինել երկու մեկնաբանություն. բառիս ստուգաբանությունը տակավին վերջնականապես ճշգրտված չէ, իսկ ենթադրությունների մեջ կա և այսպիսին՝ «հան մասնիկով դուք <դուք=սանս. դուշ > «Հանդարտիլ, խաղաղիլ» բառից»³⁵: Եթե այս վարկածը հաստատվեր. ապա «Հանտուժել» ձեր կարելի էր դիտել իրրե առավել հնագույն (արխալիզմ), զուգահեռներ փնտրելով միայն դ>տ խլացման համար: Սակայն, մեր համոզմամբ, այսուղ կարող է առաջարվել և նրկորոդ հավանական վարկած. «կ» ճյուղի բարբառների որոշ խոսվածքներում (Ախալքալաքի) այսօր էլ «Հանտուժել» են ասում, որ օրինաշափ է ինչպես դ>տ, այնպես էլ ո>— հնչյունափոխությունը: Մեր մատենագրության պատմության մեջ և վիմագիր արձանագրություններում բարբառային ձևերի օգտագործման բաղմաթիվ օրինակներ են հայտնի, որոնց Ն. Մառը վոլցարնայ ֆորմա էր կոչում: Զարմանալու ոշինչ չկա, եթե խորհննք, որ Փարավեցու հնագույն պատառիկում ավանդված ենք գտնում հենց բարբառային հնչումը: Այս նույն տեքստում առկա է և մեկ այլ բառի ինքնատիպ գրություն՝ աշխարհակորոյս-ի փոխարեն աշխարհակորոյս: Իհարկե, դյուրին կլիներ այն ընդունել իրեն գրքի սովորա-

33 Հմմտ. Հ. Անառյան, ՀԱԲ, III, 654:

34 Վկայակոչությունները տե՛ս ՆՀԲ, II, 45:

35 Տե՛ս Հ. Անառյան, ՀԱԲ, IV, 125:

կան վրիպում, դրանով իսկ՝ հարցը սպառված համարել: Բայց տակավին քննելի է, թե նորից բարբառային գրության հետ գործ չունե՞նք, քանի որ այս օրինակը եզակի չէ: Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» ձեռագրում ևս բազմիցս հանդիպում ենք «աշխահ» գրության³⁶, որ կրկնված են գտնում նաև Փիլոն Հերքայեցու «Ճառք»-ում³⁷: Ընդ որում, երկու հեղինակի հայերեն թարգմանության ձեռագրերում էլ գրության այս ձևը պատահական չէ, քանի որ երբեմն նույն էջում ունենք «աշխարհ» և «աշխահ», ավելին՝ Փիլոնի «Կեանք իմաստնոց» ձառի գրիշը նախապես գրել է «աշխարհ», իսկ հետո դարձրել «աշխահ», հրատարակիչների խոսքով «քերելով զնախ գրեալ ու տառ» (էջ 33, ծան. 1): Նման գրություն հատուկ է «Ճառքի» համեմատվող ձեռագրերից մեկին (տե՛ս էջ 143, ծան. 4):

Ուրեմն, կարելի է վստահ ասել, որ մեր պատառիկի «աշխահակորոյս»-ը պատահական չէ և իր զուգահեռն ունի այլ ձեռագրերում: Իսկ քանի որ այդ ձեռագրերը տարբեր ժամանակների ու գրիչների արտադրանք են, ապա բառիս այս ինքնատիպ գրությունը բացատրելի է միայն պատմական Հայաստանի որոշ գավառների բարբառային ինքնատիպությամբ: Դժբախտաբար, հիշյալ երեք անկախ ազգայունների ձեռագրի գրչության վայրի մասին քիչ դիտենք, այլապես հարցը ինքնին կմասնավորանար, պարզելով թե՛ որ բարբառին հատուկ լինելու, թե՛, մանավանդ, պատառիկիս որտեղ գրվելու պարագան: Նկատառելի է միայն, որ Կուզի «Հակաճառության» ձեռագիրը (այժմ՝ Մատենադարան, № 1958) X—XI դարի մագաղաթյա հնագույն գրչագրերից է: Այստեղից բխում է, որ լեզվական իրողությունը գրառված է վաղ շրջանի ձեռագրերում և որ, նաև բառ գրչության, մեր պատառիկն ու «Հակաճառության» ձեռագիրը իրար ժամանակակից են:

Ի վերջո, պատառիկներ ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ և կետադրությանն ու տրոհության նշաններին, քանի որ այդ ամենը կարող է օգտակար լինել գրչության ժամանակի հետ կապված հարցեր արծարծելիս³⁸: Փարագեցու պատմության այս ոչ մեծ պատառիկը հարուստ է և կետադրության նշաններով: Ընդամենը մեկ թերթում գործածված են այնքան նշաններ, որքան երեմն դժվար է լինում գտնել հին ձեռագրի մի պրակի մեջ: Պարբերության վերջում մեկ անգամ գործածված է երկու կետանոց վերջակետ, զրված վերջին տառից մեկ տառաշափ հեռու և տողի վերին եզրին համասար. «...Ես ԶՃՇՄԱՐԻՑ ՎԱԴԱ/ՊԵՏՈՒ: (I 1ր): Նույն դիրքով հանդիպում է և միջակետի գործածություն (ՓԲ/ՍԱԿԵՑԱՆ., I 1ր): Սակայն կան և այլ դեպքեր. մեկ կետը զրվում է նաև տողի ստորին եզրին (ի ՅԱ/ՍՊԻՄԵՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐ] ԴՐԾԵԱԼ. I 2ա) կամ՝ բռն տողամիջում (ՅԱ/ՄԵՆԱՅՆ ՆԵՒԹՍ ՀՌԻԲ., ԱՅԴՊԵՍ ԳԻՏԷՔ. II 1ր, ԽԱՒՂԱՄԱՆՍ. ՎԻՐԱՀՈՐԱՅ. II 2ա, ԽԱԲԵՌԻԹԵ/ԱՆ ՍԱՌԱՅԵԼ. Ես ԶԼԱՒԻՔ. II 2ր), ընդ որում նախավերջին օրինակի դեպքում միջակետը քառակուսի տեսք շունի, այլ՝ կլոր կետ: Պատառիկում երեք անգամ ստորակետ է հանդի-

³⁶ Տիմոքեսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանելուն ի ժողովոյն Քաղկեդովնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի և երուանդ վարդապետի, էջմիածին, 1908, էջ 216₄, 297₁₀, 300₃ և այլն (Հմմտ. 2. Անայան, ՀԱԲ, I, 396):

³⁷ Փիլոնի Հերցալեցոյ Ճառք..., Վենետիկ, 1892, էջ 33, 143: Հմմտ. 2. Անայան, անդ:

³⁸ Միջնադարյան կետադրությանը վերաբերող նախական հաղորդում, տե՛ս Հ. Մխիթարյան, Կետադրական նշանները հայերենում, 2. Ա., 1971, № 4—6, էջ 190—206:

պում (ՅԱՍՆՈՒԽ ՈՒՄԵՔ [ՄԻ]/նԶ, I 2ա, ԱՄԵՆԱՅՅՆ ՆԻՒԹՔ, II 1ր, ՆՄԱ/-/ՆԻՔՆ], ՈՐՔ II 2ր):

Առողանության նշանի գործածության հանդիպում ենք մեկ անգամ, որ երկու տարի տարածություն ծածկող նշան է, զատելով տեղից՝ շեշտի կամ բացականշականի նշանակությամբ, աշխատ ձախ վայրընթաց թերությամբ (ԵՒ ԶԻՄԻ ԵԽՍ ՄԻՌՁԷ I 1ա):

Այս նշանների համապրությանը այլ պատառիկներում ու հին ձեռագրերում հանդիպող նշանների հետ նկատելիորեն կօդնի նրանց գործածության պատճենուն ուսումնասիրելուն, մանավանդ երբ նկատի առնվեն հայոց հին քերականների աշխատություններով ավանդված սահմանումներն ու բնութագրումները:

Պ. Մ. ՄՈՐԱԴՅԱՆ, Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

НОВООТКРЫТЫЙ ФРАГМЕНТ «ИСТОРИИ» ЛАЗАРА ПАРБЕЦИ (Р е з ю м е)

Настоящий фрагмент «Истории» Лазара Парбеци сохранился в виде защитных листов рукописи А-82 Института востоковедения АН СССР в Ленинграде. Рукопись датируется XIV в. (до 1338 г.), защитные листы — X—XI вв. Текст Лазара Парбеци написан на пергамене, письмо — прямоугольный еркатагир. Отрывок соответствует стр. 80 33—37, 38—81 5, 7—13 издания 1904 г. Статья содержит публикацию фрагмента, анализ разночтений и реконструкцию текста в пределах данного отрывка.

Новооткрытый фрагмент позволяет внести существенные коррективы в имеющийся текст, содержит слова, не учтенные в глоссариях, и диалектизмы. Фрагмент изобилует знаками пунктуации.

Р. М. MOURADIAN, K. N. YOUBACHIAN

LE FRAGMENT DERNIÈREMENT DÉCOUVERT DE L'«HISTOIRE» DE LAZARE PARBETSI

(R é s u m é)

Le présent fragment de l'Histoire de Lazare Parbetsi a été conservé sous forme de feuille de garde du manuscrit A-82 de l'Institut d'Orientalisme de l'Académie des Sciences de l'URSS à Léningrad. Le manuscrit date du XIVe siècle (avant 1338), pages de garde du Xe—XIe siècles. Le texte de Lazare Parbetsi est écrit sur du parchemin, écriture: erktaguir rectangulaire. Le fragment correspond aux pages 80 33—37, 38 et 81 5, 7—13 de l'édition de 1904. L'article comporte la publication du fragment, l'analyse des variantes et la reconstitution du texte dans les limites du fragment en question.

Ce nouveau fragment permet d'apporter d'importants correctifs au texte existant, il comporte des mots non cités dans les glossaires et des formes dialectales. Les signes de ponctuation y abondent.